# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Երևանի Հ.Պարոնյանի անվան հ.59 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Երաժշտություն» (6,5դասաժամ), «Ազգային երգ ու պար»(4,5 դասաժամ) «Տեխնոլոգիա» (9 դասաժամ), «Կերպարվեստ» (7 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ– ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. հոկտեմբերի 12 - ից մինչև հոկտեմբերի 25 -ը ներառյալ, ամեն օր ժամը՝ 10-ից $15^{00}$ բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. հոկտեմբերի 27-ին ժամը $14^{00}$-ին Երևանի Հ.Պարոնյանի անվան հ. 59 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Վարշավյան 45:

Տեղեկությունների համար զանգահարել 010207259 հեռախոսահամարով: